https://doi.org/10.59546/18290744-2025.4-6-11

ԳԱԳԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
*ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի հայցորդ*

ГАГИК АМБАРЦУМЯН
*Соискатель Института философии, социологии
и права Национальной академии наук
Республики Армения*

GAGIK HAMBARDZUMYAN
*Applicant at the Institute of Philosophy,
Sociology and Law of the National Academy
of Sciences of the Republic of Armenia*

# ԻՐԱՎԱՀԱՍԿԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԻՊԵՐՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

# THE MAIN TYPES OF LEGAL UNDERSTANDING IN THE MODERN THEORY OF LAW

# ОСНОВНЫЕ ТИПЫ ПРАВОПОНИМАНИЯ В СОВРЕМЕННОЙ ТЕОРИИ ПРАВА

**Ներածություն**

Իրավահասկացման հիմնական տիպերն իրավունքի ժամանակակից տեսությունում ամենախնդրահարույց թեմաներից է, ինչի վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ գոյություն չունի միասնական մոտեցում: Իրավահասկացումն իրենից ներկայացնում է իրավական երևույթների վերաբերյալ կոնկրետ հայեցակարգային մոտեցում, որով հիմնավորվում կամ մերժվում է այս կամ այն իրավահասկացումը: Ժամանակակից իրավահասկացման հիմնական տիպերն են՝ բնական իրավունքի վերափոխված հայեցակարգը, նորմատիվիստական (պոզիտիվիստական) մոտեցումը, իրավաբանական իրավահասկացումը, ինտեգրատիվ իրավահասկացումը, լիբերտար-իրավաբանական իրավահասկացումը:

**Հիմնական հետազոտություն**

Ժամանակակից գրականության մեջ առանձնացվում է իրավահասկացման տեսակների ու տիպերի մեծ քանակ, որը պետք է կարգավորել ու վերլուծել առավել ճշգրիտ ու օբյեկտիվ ընտրության համար: Դասակարգման չափանիշները նույնպես շատ են տարբերվում միմյան-

ցից[1]:

Հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման գործընթացը ներառում է երեք փուլեր և երեք հիմնական սոցիալական սուբյեկտներ: Կարելի է պայմանականորեն առանձնացնել իրավահասկացման երեք մակարդակներ ու փուլեր:

Առաջին փուլ՝ իրավաստեղծ գործունեություն՝ ուսումնասիրելով իրավական մտածողությունը և իրավագիտակցությունը իրավական կարգավորման մեխանիզմի ենթատեքստում, անհրաժեշտ է վերլուծել իրավական նորմերի կամ իրավաստեղծման ստեղծման փուլը: Պետության իրավական քաղաքականության համար շատ կարևոր բաղկացուցիչ մաս է իրավաստեղծման գիտական ապահովումը: Դրա համար էլ նախ և առաջ դիտարկենք գիտական-տեսական իրավահասկացումը, որից կախված են իրավական կարգավորման մեխանիզմի բոլոր բաղկացուցիչ մասերը:

Ավելի վաղ իրավագիտությունում գերակայում էր մտածողության որպես ճանաչողական գործընթացի մասին պատկերացումը, երևույթների օրինաչափություններ, ինչպիսիք են իրավագիտակցությունը, իրավահարաբերությունները և այլն, կոնկրետ-պետական հասարակությունում[2]:

Որոշ հեղինակներ իրավահասկացման սահմանման ժամանակ կիրառում են այլ, դժվար սահմանվող հասկացություններ՝ իրավունքի կերպարը, իրավունքի իմաստը և այլն: Օրինակ, Ա. Վ.Պոլյակովը գտնում է, որ «իրավահասկացման տիպը իրավունքի վերաբերյալ որոշակի կերպար է, որը բնութագրվում է իրավունքի առավել ընդհանուր հատկանիշների միասնությամբ ու նրա հանդեպ գործնական վերաբերմունքի ընդհանուր նշագծերով»[3]: Ըստ նրա՝ կարելի է առանձնացնել իրավահասկացման նվազագույնը երկու հիմքեր՝ գործնական՝ որպես իրավունքի հանդեպ վերաբերմունք այս կամ այն հասարակությունում, և տեսական՝ որպես իրավունքի հիմնադրույթային մոտեցում:

Ըստ մեզ՝ տեսական իրավահասկացումը կազմում է իրավունքի փիլիսոփայության հիմքը: Իրավունքի էության մասին հարցին պատասխանը հանդես է գալիս որպես փիլիսոփայական-իրավական մտածողության հիմնական խնդիր:

Իրավունքի փիլիսոփայության դասագրքերի հեղինակները հաստատում են, որ «իրավահասկացման տիպը իրավունքի իմաստային մոդել է, որը սահմանվում է նրա աղբյուրով»[4]: Այն, թե որտեղ է մտածողը տեսնում իրավունքի աղբյուրը, պայմանավորում է իրավունքի էության ըմբռնումը: Երբ իրավունքի աղբյուր է համարվում Աստված, ձևավորվում է աստվածաբանական իրավաբանական ընկալում: Երբ նորմերի հիմքում դրվում է մարդու բնույթը կամ տիեզերական կարգը, առաջանում է բնական իրավունքի տեսությունը: Իսկ երբ իրավունքը դիտարկվում է որպես տվյալ ազգի մտածողության արդյունք, ձևավորվում է ազգային կոնսերվատիվ մոտեցում իրավունքի նկատմամբ: Իրավունքի ֆորմացիոն (կազմակերպական-հասարակական) տեսությունը իրավունքը կապում է մարդկության պատմության տարբեր փուլերի հետ՝ ստրկատիրություն, ֆեոդալիզմ, բուրժուական ժամանակաշրջան, սոցիալիստական փուլ: Այս մոտեցումն իրավունքը դիտարկում է որպես հասարակական կարգի պահպանման և կազմակերպման գործիք՝ վերլուծելով նրա ֆունկցիոնալ դերը տվյալ փուլում»:

[1] Մանրամասն տես *Батиев Л.В.*, Эволюция правопонимания от античности до Нового времени: Монография. М., 2014.

[2] Տես *Маркова-Мурашова С.А.*, Правовая система и типология правопонимания: историко-теоретический и сравнительно-правовой анализ. Краснодар, 2005, с. 234.

[3] Տես *Поляков А.В.*, Общая теория права. СПб, 2001, с. 37.

[4] Տես *Баранов П.П., Шпак В.Ю. и др.*, Философия права. Ростов н/Д. 2002, с. 32.

Իրավահասկացումը իրենից ներկայացնում է սոցիալական իրականության իրավաբանական հիմնադրույթ: Ցանկացած իրավահասկացման հիմքում ընկած է մարդկային ու հասարակական կյանքի իմաստի, մարդու ու հասարակության էության մասին ինչ-որ մի պատկերացում: Այլ խոսքերով՝ յուրաքանչյուր իրավահասակացում հիմնվում է աշխարհի փիլիսոփայական պատկերի որոշակի տիպի վրա: Բացի դրանից՝ իրավահասկացումը ուղղորդվում է այս աշխարհի ճանաչման տեսությունից:

Բազմաթիվ ժամանակակից հետազոտողներ որպես իրավունքի փիլիսոփայության առարկա առանձնացնում են իրավունքի իմաստը: Օրինակ, Յու.Վ. Տիխոնրավովը ենթադրում է , որ «իրավունքի փիլիսոփայությունը իրավունքի իմաստի մասին ուսմունք է, այսինքն նրա մասին, թե համընդհանուր ինչ պատճառների արդյունքում է, հանուն ինչ համընդհանուր նպատակների է մարդը սահմանում իրավունքը»[5]:Իրավահասկացումը նաև ունի իմաստային համակարգ, քանի որ իրավունքի էության մասին հարցը նաև պատասխան է իրավունքի իմաստի մասին:

Իրավահասկացման խնդիրը վերաբերում է իրավունքի փիլիսոփայության մեջ կարևորների թվին: Վ.Ս. Ներսեսյանցը նշում է.«Այն մասին հարցը, թե ինչ է իրավունքը, ունի նույնքան հիմնարար նշանակություն իրավունքի փիլիսոփայության համար, ինչպես և ի՞նչ է ճշմարտությունը՝ փիլիսոփայության ու մարդկային ճանաչողության համար»[6]:

Իրավաբանական գրականության մեջ հաճախ հանդիպում է հետևյալ եզրույթների փոխկապվածությունը՝ իրավահասկացում, իրավական հիմնադրույթ, իրավական դոկտրին, իրավաբանական պարադիգմ, իրավական գաղափարաբանություն: Այս հարցերը դիտարկենք ավելի մանրամասն:

Աշխատանքներից մեկում, որոնք նվիրված են իրավական մտածողության վերլուծությանը, Ա. Ի. Օվչիննիկովը նշում է, որ իրավագիտության մետատեսության մեջ ու փիլիսոփայությունում իրավական մտածողության պարադիգմաներ ասելով կարելի է հասկանալ իրավահասկացման դպրոցները[7]: Օրինակ՝ հեղինակը առանձնացնում է իրավական մտածողության բնական-իրավական պարադիգմը, որի շրջանակներում զարգանում են իրավահասկացման բոլոր ժամանակակից հիմնադրույթները, որոնք հիմնվում են մարդու իրավունքների տեսության վրա, մասնավորապես՝ Վ. Ս. Ներսեսյանցի լիբերտար իրավահասակցումը, պատմական-հետադիմական, սոցիոլոգիական, դիալեկտիկական-մատերիալիստական, ֆենոմենոլոգիական, հերմենեվտիկ, էքզիստենցիալ ու իրավական մտածողության այլ պարադիգմեր: Ըստ նրա կարծիքի բոլորը տարբերվում են իրավունքի հանդեպ սեփական մոտեցմամբ, նրա յուրահատուկ հասկացությամբ, տեսական-մեթոդաբանական սխեմաներով, հատուկ-գիտական խնդիրների լուծման մոդելների միասնությամբ:

Վ. Վ. Լապաևան նշում է, որ իրավահասկացման տիպը իրավագիտության մեջ ճանաչողական կարգավիճակով համարժեք է այն երևութին, որը ժամանակակից գիտության մեջ հայտնի է որպես գիտական պարադիգմ: «Պարադիգմ» հասկացության ներքո հեղինակը հասկանում է գիտական հանրույթի որոշակի խմբի կողմից ընդունված ընդհանուր տեսական և մեթոդաբանական մոտեցումները, որոնք ապահովում են ճանաչողության գործընթացի ներքին ամբողջականությունն ու միասնականությունը տվյալ գիտական ուղղության շրջանակում:

Ըստ Լապաևայի՝ պարադիգմը տեսությունների համախումբ է, որոնք միավորված են ընդհանուր մեթոդաբանությամբ: Երբ գերիշխող գիտական պարադիգմը փոխվում է, դա

[5] Տես *Тихонравов Ю.Н.,* Основы философии права. М., 1997, с. 46.
[6] Տես *Нерсесянц В.С.,* Философия права, М., 2016, с. 32.
[7] Տես *Овчинников А.И.,* Правовое мышление теоретико-методологический анализ. Ростов н/Д, 2003, с. 82.

նշանակում է տվյալ ոլորտում գիտական որոնման տեսական և մեթոդաբանական հիմքերի արմատական վերափոխում, ինչը նշանավորում է նոր դարաշրջան գիտական ճանաչողության գործընթացում:

Իրավահասկացման տիպը, որպես գիտական պարադիգմի յուրահատուկ տեսակ, ներկայացնում է տեսականմեթոդաբանական մոտեցում իրավունքի ընկալման և կերպարի ձևավորման հանդեպ: Այն ձևավորվում է վերլուծության մեթոդոլոգիայի հիման վրա՝ հիմնվելով իրավունքի այս կամ այն տեսության տեսանկյունի վրա:

Համաձայն նման սահմանման՝ իրավահասկացման դասակարգման հիմքում, մեր կարծիքով, ընկած է իրավունքի վերլուծության մեթոդաբանությունը, որը թույլ է տալիս առանձնացնել իրավահասկացման պոզիտիվիստական ու ոչ պոզիտիվիստական տիպերը, որոնց շրջաններում զարգանում են իրավահասկացման ու իրավունքի հիմնադրույթի տարբեր դրսևորումներ[8]:

Իրավահասկացում հասկացության նույնականացումը իրավական գաղափարաբանության հետ հնարավոր չէ: Որպես գաղափարաբանություն՝ հիմնականում ենթադրվում է սոցիալական իրականության, անձի, հասարակության, պետության, նրանց փոխհարաբերությունների, հասարակական զարգացման հեռանկարների հանդեպ իրավական, քաղաքական փիլիսոփայական, կրոնական և այլ մոտեցումների համակարգը[9]: Հայաստանի սահմանադրությամբ սահմանված է գաղափարական մոնիզմի հանդեպ արգելք: Պետական կամ պարտադիր գաղափարական սահմանման արգելքը պետք է ուղղորդի ոչ միայն դեպի հետապնդումների բացակայություն այս կամ այն գաղափարական սահմանումներով գրավված լինելու համար, այլև դեպի սոցիալական կյանքի այս կամ այն սուբյեկտների առավելությունների ու արտոնությունների բացակայություն՝ կախված գաղափարական կամ քաղաքական համոզմունքներից:

Իրավական գաղափարաբանությունն ունի լայն մեկնաբանություն որպես իրավական արժեքների գերակա համակարգ, որն ապահովված է սահմանադրական ձևում ու նեղ՝ որպես այս կամ այն իրավական երևույթների մեկնաբանության համակարգ: Վ.Ա. Տումանովն իր «Բուրժուական իրավական գաղափարաբանություն» հիմնարար աշխատանքում շարադրելով իրավահասկացման տարբեր տիպեր, ըստ էության նույնականացրել է իրավական գաղափարաբանության ու իրավահասկացման էությունը[10]:

Շատ հետազոտողներ նշում են գաղափարաբանության առկայությունը օրենսդրության հիման վրա: Ա.Ի. Օվչիննիկովը հաստատում է, որ իրավական գաղափարաբանությունը կարող է դիտարկվել որպես գիտական արժեքների աստիճանակարգ, կառույց կամ ներկայացում, որպես իրավական իրականության տարբեր հասկացություններ ու նպատակներ, ինչպես օրինակ մարդու իրավունքներն ու պարտականությունները և պետության իրավունքներն ու պարտականությունները, ֆորմալ հավասարությունը, օրենքը և հրամանը, օրինականությունը, սեփականության իրավունքը, սոցիալական արդարությունը և այլն: Այս աստիճանակարգի բրգաձև կառուցվածքը թույլ է տալիս կատարել գերակայություններ, ձևակերպել իրավունքի ու իրավական կարգավորման սկզբունքները, իրավական համակարգի և իրավական քաղաքականության զարգացման ռազմավարությունն ու ուղղությունները: Իրավական գաղափարաբանությունը հիմնվում է որոշակի իրավական դոկտրինի, իրավահասկացման

[8] Նույն տեղը, էջ 35:
[9] Տես *Конюхова В.А., Садовникова Г.Д.*, Комментарий к Констиутции Российской Федерации. М., 2006, с. 113.
[10] Տես *Туманов В.А.*, Буржуазная правовая идеология. К критике учений о праве. М., 1971.

վրա[11]: Մենք համաձայն ենք այս տեսանկյան հետ, սակայն այստեղ կարևոր է հաշվի առնել, որ իրավահասկացումը ի տարբերություն իրավական գաղափարաբանության, ոչ միշտ է համընկնում քաղաքական գաղափարաբանության հետ ու անգամ կարող է անտարբեր լինել քաղաքականության հանդեպ: Օրինակ, իրավահասկացման հոգեբանական տեսության համար նշանակություն չունի, թե ինչ քաղաքականության մասին է խոսքը գնում լիբերալ թե կոնսերվատիվ: Իմպերատիվ-ատրիբուտիվ էմոցիաները առք ու վաճառքի կամ փոխառության ընթացքում կարող են առաջանալ անկախ քաղաքական հայացքներից:

Անհրաժեշտ է նշել, որ կան շատ քիչ հետազոտություններ, որոնք նվիրված են պետության նոր իրավական գաղափարաբանությանը, Օ. Յու. Ռիբակովը ենթադրում է, որ ցանկացած քաղաքականության կենտրոնում գտնվում են մարդու կեցության հարատև հարցեր՝ արդարություն, մասնակցության իմաստ պետական գործերին, անձի ու իշխանության համագործակցության հիմունքներ: «Իրավական գաղափարաբանությունը հանդիսանալով իրավական քաղաքականության բաղկացուցիչ մաս, կենտրոնացված կերպով արտացոլում է հիմնական ձեռքբերումները իրավունքի ոլորտում և ցանկացած իրավական ապագայի ամրագրված ձևերը: Այն հանդես է գալիս որպես իրավական կյանքի և նրա զարգացման հիմնական տենդեցների արժեքային ամրագրված մոդել: Իրավական գաղափարաբանությունը, որ կենտրոնացնում է իրավաբանական արժեքները, ծառայում է քաղաքակիրթ ժողովրդավարության ինստիտուտների զարգացմանը»[12]:

Շատ հեղինակներ ուշադրություն են դարձնում երկրում իրավական գաղափարաբանության բացակայությանը: Ռ.Ս. Բայնիյազովն արձանագրում է, որ «ամբողջովին արտահայտված համազգային իրավական գաղափարաբանության պակասը հիվանդագին կերպով զգացվում է Ռուսաստանի ամբողջ իրավական տարածքում: Դրա համար էլ համառուսական իրավական գաղափարաբանության ձևավորումը վաղուց արդեն դարձել է ռուսական իրավական կյանքի ամենաարդիական հարցը[13]: Սակայն մեզ ավելի մոտ է Ա.Ի. Օվչիննիկովի դիրքորոշումը, ով հիմնավորել է, որ չի կարող լինել գաղափարաբանություն, հակառակ դեպքում անհասկանալի է, թե ինչպես է կառուցվում արժեքային նախասիրությունների համակարգը, որոնցով հիմնավորվում է պետության նորմատիվ գործունեությունը[14]: Նորմը նախևառաջ պաշտպանվող արժեք է ու հետևաբար նորմերի կամ օրենսդրության համակարգ, արժեքների համակարգ, նրանց օբյեկտիվացիա:Նշանակում է, որ պետական գաղափարաբանությունը ներկա է անխուսափելիորեն իրավական նորմերի համակարգում, որոնք հրապարակվել են պետության կողմից: Դրա համար էլ որոշակի պետական գաղափարաբանությունը նույնպես առկա է իրավունքի այսօրվա համակարգում և ազգային իրավական համակարգում, ինչպես այն առկա էր նախկինում, նախավերակառուցման ժամանակաշրջանում:

Իրավահասկացումը կախված է իրավական գաղափարաբանությունից: Այլ կերպ անհնար է բացատրել, թե ինչու կոմունիստական գաղափարաբանության՝ լիբերալ-ժողովրդավարական գաղափարաբանությամբ փոխարինումը առաջացրել է իրավահասկացման մասին հարցերի տարակարծություններ: Իրավահասկացման որոշ տիպեր ավելի շատ են կախված իրավական գաղափարաբանությունից, իսկ ուրիշները ավելի քիչ:

[11] Տես *Овчинников А.И.,* Правовое мышление в герменевтической парадигме. с. 90.
[12] Տես *Рыбаков О.Ю.,* Правовая политика как юридическая категория: понятие и признаки// Журнал российского права. 2000, N3, с. 34.
[13] Տես *Байниязов Р. С.,* Мировоззренческие основы общероссийской правовой идеологии//Журнал российского права. 2000, №11, с. 20-22.
[14] Տես *Овчинников А.И.,* Правовое мышление в герменевтической парадигме. с. 114.

Լիբերալ իրավաբանական գաղափարաբանությանը ավելի մոտ է բնական իրավունքի տեսությունը: Բայց պետք է հիշել, որ իրավաբանական պոզիտիվիզմը զարգացել է 19-րդ դարում, այդ թվում նաև բուրժուական Եվրոպայի օրենսգրքերում:

Դիտարկենք իրավահասկացում և իրավական հիմնադրույթ հասկացությունների հարաբերակցությունը: Ըստ մեզ՝ այստեղ կարելի է ենթադրել մասնակից համընկնություն, քանի որ հիմնադրույթն իրենից ներկայացնում է որոշակի երևույթների հասկացման, մեկնաբանության որոշակի միջոց, հիմնական տեսանկյուն, ղեկավարող գաղափար նրանց լուսաբանման համար, առաջատար մտահաղացում, գործունեության տարբեր տեսակների կառուցողական սկզբունք: Միևնույն ժամանակ հիմնադրույթը կարող է և ունենալ գործնական բնույթ որպես այս կամ այն նպատակների ձեռքբերման տեսակների հիմնավորված միջոցառումների ծրագիր:

Հիմնադրույքը հանդես է գալիս իրավունքի որոշակի հասկացման ամբողջական շարադրմամբ, իմաստավորված ու ռեֆլեքսիվ կերպով խմբագրված: Սա վերաբերում է նրա իրավական դոկտրինին:

Ա. Ի. Օվչիննիկովը ենթադրում է ,որ 'իրավական դոկտրինը ոչ միայն որոշակի իրավահասկացման տեսակային ձև է, այլ նաև այս կամ այն երկրի իրավական համակարգի կոնկրետ զարգացման ռազմավարություն, յուրահատուկ իրավական քաղաքականություն: Հենց նման ենթատեքստում է հաճախ կիրառվում դոկտրին եզրույթը: Իրավական համակարգերի ձևավորման կոնկերտ առաջարկությունները հանդիսանում են որպես այս կամ այն իրավական դոկտրինի տեսական կառույցի հետևանք, որպես նրա իրացման գործնական ձև, որով սահմանվում է այս կամ այն դոկտրինի արժեքը: Տվյալ ենթատեքստում իրավական դոկտրինը իր ֆունկցիոնալ նշանակությամբ հանդես է գալիս որպես իրավական գաղափարաբանություն[15]: Իրավաբանական ու քաղաքագիտական գրականության մեջ ժամանակակից քաղաքական-իրավական դոկտրինի որպես իրավական ոլորտում պետության նպատակների, միջոցների ու գործողությունների սկզբունքի կայուն համակարգի մասին հարցը համարվում է արդիական գիտական խնդիր[16]: Իրավագիտությունը որպես հասարակական գիտություն՝ բացառություն չէ իրավական կարգավորման մեխանիզմի համար նորմատիվ կառույցների գիտական նախագծումը կախված է իրավագիտակցությունից, ցանկալի իրավունքից, սուբյեկտիվ գործոններից, իրավական վերնախավի քաղաքական ու գաղափարական նախապատվություններից[17]:

Երկրորդ փուլ՝ իրավական նորմերի կիրառման փուլ: Պետք է առանձնացնել մասնագիտական կամ գործնական իրավահասկացումը որպես իրավակիրառողի ինտելեկտուալ գործունեության արդյունք, որն իմաստավորում է իրավունքի դերը հասարակական կյանքում: Ամենից հաճախ իրավաբանի համար առավել նախընտրելի է իրավաբանական պոզիտիվիզմը կամ նորմատիվ իրավահասկացումը, որն ուղղված է իրավունքի որպես սուվերենի հրամանի ու օրինականության սկզբունքի մարմնավորում. օրենքը խիստ է, բայց այն օրենք է:

Երրորդ փուլ՝ անհրաժեշտ է հաշվի առնել իրավական նորմերի գործողության տարբեր բնագավառները, որոնք հայտնվում են նրա արդյունքում: Առօրյա կամ կենցաղային իրավա-

[15] Տես *Овчинников А.И., Овчиникова С.П.,* Евразийское правовое мышление Н.Н. Алексеева. Ростов н/Д, 2002, с. 125.

[16] Տես *Василенко И.А.,* Современные правовые доктрины, М., 1992, Алексеев С.В., *Каламанов В.А.,Черненко А.Г.,* Идеологические ориентиры России/под ред С. В. Степашина, М., 1998, с. 32, 36, *Полякова Т.М.,* К вопросу о политико-правовой доктрине России//История государства и права. 2006. №1, с. 34.

[17] Տես *Тихомиров Ю.А.,* Право:прогнозы и риски. М., 2015, с. 12-13.

հասկացման հետազոտությունը իրենից ներկայացնում է իրավունքի գործողության տեսության կարևորագույն ոլորտ, քանի որ դրա միջոցով է տեղի ունենում իրավունքի ընկալումը, դեպի սոցիալական վարքագծի նորմատիվ նախատեսումների փոխանցումը: Հետազոտությունների անբավարար քանակը իրավական նորմերի հասկացման խնդիրների շրջանում բերում է նրան, որ օրենքներն ու նորմատիվ ակտերը մնում են որպես իրավունք գրքերում, իսկ երկրում անցկացվող մոդեռնիզացիոն բարեփոխումները, որոնք հագեցած են արևմտյան իրավական մոդելների, կառույցների ու ինստիտուտների կողմից, աղճատված կերպով ընկալվում են բնակչության կողմից ու տանում են դեպի գործող իրավունքի օտարում:

**Եզրակացություն**

Բոլոր ժամանակների իրավահասկացության հիմնական տիպերը փորձում են բացահայտել իրավունքի էությունն ու բովանդակությունը, դրա սոցիալական նշանակությունը: Սակայն մինչև օրս չի մշակվել մի այնպիսի հայեցակարգ, որ կարողանար լիովին բացահայտել իրավունք երևույթի բնույթն ու էությունը, դրա բովանդակային առանձնահատկությունները: Յուրաքանչյուր իրավահասկացման տիպը յուրովի է մեկնաբանում իրավունքի էությունը, նրա սոցիալական նշանակությունը:

**Ամփոփագիր:** Սույն հոդվածում հանգամանորեն քննարկվում է իրավահասկացման հետ կապված արդի հայեցակարգային մոտեցումները: Իրավահասկացման տիպը իրավունքի վերաբերյալ որոշակի պատկերացում է, որը բնութագրում է իրավունքի առավել էական հատկանիշների համակցությունը:

Արդի իրավահասկացման հիմնական հայեցակարգային մոտեցումներն են՝ վերափոխած բնական իրավունքի հայեցակարգերը, նորմատիվիստական (պոզիտիվիստական) մոտեցումը, իրավաբանական իրավահասկացումը, ինտեգրատիվ իրավահասկացումը, լիբերալ-իրավաբանական հայեցակարգերը: Իրավահասկացումը իրենից ներկայացնում է սոցիալական իրականության իրավաբանական հիմնադրույթ: Իրավահասկացումը իրենից ներկայացնում է սոցիալական իրականության իրավաբանական հիմնադրույթ: Ցանկացած իրավահասկացման հիմքում ընկած է մարդկային ու հասարակական կյանքի իմաստի, մարդու ու հասարակության էության մասին ինչ-որ մի պատկերացում: Այլ խոսքերով, յուրաքանչյուր իրավահասկացում հիմնվում է աշխարհի փիլիսոփայական պատկերի որոշակի տիպի վրա:

Որպես հասարակական հարաբերությունների կարգավորման ու պաշտպանության գործիք, իրավունքը ծագել է սոցիալական զարգացման ամենավաղ փուլերում և զարգացել հասարակության հետ միասին: Դրա հետ մեկտեղ իրավագոյացման և իրավակիրառման գործընթացները երկար ժամանակ կրել են տարերային բնույթ, ինչը պայմանավորված էր սոցիալական զարգացման օբյեկտիվ օրինաչափություններով: Այս օրինաչափությունների հիմքում դրված են պատճառա-հետևանքային կապերը և համակարգերի ձևավորման ընդհանուր սկզբունքները: Ցանկացած համակարգ, այդ թվում նաև սոցիալական համակարգը, զարգանում է առնվազն երեք պահերով. Ինքնապահպանման, ինքնաքայքայման և ինքնազարգացման ազդեցության ներքո: Նշված միտումների հզորացումը կամ թուլացումը հանդես է գալիս մի կողմից՝ որպես նախորդող դեպքերի հետևանք, իսկ մյուս կողմից՝ հաջորդող փոփոխությունների պատճառ:

**Annotation.** This article thoroughly discusses the modern conceptual approaches related to legal understanding. A type of legal understanding is a certain understanding of law that characterizes a combination of the most essential features of law.

The main conceptual approaches to modern legal understanding are the transformed concepts of natural law, the normative (positivist) approach, judicial understanding, integrative legal understanding, liberal legal concepts.

Legal understanding is a legal foundation of social reality. At the heart of any legal understanding is some idea of the meaning of human and social life, of the essence of man and society. In other words, each legal understanding is based

on a certain type of philosophical picture of the world. As a tool for regulating and protecting social relations, law arose in the earliest stages of social development and developed together with society. At the same time, the processes of legal formation and law enforcement have long been of an elemental nature, which was conditioned by the objective regularities of social development. These patterns are based on cause-and-effect relationships and general principles of system formation. Any system, including the social system, develops in at least three moments. under the influence of self-preservation, self-destruction, and self-development. The strengthening or weakening of the mentioned trends acts, on the one hand, as a consequence of preceding events, and on the other hand, as a cause of subsequent changes.

**Аннотация.** В данной статье подробно рассматриваются современные концептуальные подходы, связанные с правопониманием. Разновидностью правопонимания называется определенное понимание права, характеризующее совокупность наиболее существенных особенностей права. Тип правопонимания - это определенное понимание права, которое характеризует совокупность наиболее существенных характеристик права. Основными концептуальными подходами к современному правопониманию являются трансформированные концепции естественного права, нормативистский (позитивистский) подход, юридическое правопонимание, интегративное правопонимание, либерально-правовые концепции.

Легализация – правовая основа социальной реальности. В основе любого правового понимания лежит некоторое представление о смысле человеческой и общественной жизни, иными словами, всякая легализация опирается на определенный тип философской картины мира.

Право как инструмент регулирования и защиты общественных отношений возникло на самых ранних этапах общественного развития и развивалось вместе с обществом. В то же время процессы правотворчества и правоприменения издавна носили стихийный характер, что было обусловлено объективными закономерностями общественного развития, в основе которых лежат причинно-следственные связи и общие принципы системообразования. Любая система, в том числе и социальная, развивается по крайней мере в трех моментах: под влиянием самосохранения, самоуничтожения и саморазвития. Усиление или ослабление указанных тенденций выступает, с одной стороны, как следствие предшествующих событий, а с другой — как причина последующих изменений.

***Բանալի բառեր*** *- իրավահասկացում, իրավունք, իրավական հայեցակարգ, նորմատիվիստական (պոզիտիվիստական) իրավահասկացում, բնական իրավունքի տեսություն, ինտեգրատիվ իրավահասկացում, լիբերալ-իրավաբանական հայեցակարգ:*

***Key words:*** *legal understanding, law, legal concept, normativist (positivist) legal understanding, theory of natural law, integrative legal understanding, liberal-legal concept.*

***Ключевые слова:*** *правопонимание, право, правовая концепция, нормативистское (позитивистское) правопонимание, теория естественного права, интегративное правопонимание, либерально-правовая концепция.*

**Օգտագործված գրականության ցանկ**

1. Батиев Л.В., Эволюция правопонимания от античности до Нового времени: Монография. М., 2014.
2. Маркова-Мурашова С.А., Правовая система и типология правопонимания: историко-теоретический и сравнительно-правовой анализ. Краснодар, 2005, с. 234.
3. Поляков А.В., Общая теория права. СПб, 2001, с. 37.
4. Баранов П.П., Шпак В.Ю. и др.Философия права. Ростов н/Д. 2002. с. 32.
5. Тихонравов Ю.Н., Основы философии права. М., 1997, с. 46
6. Нерсесянц В.С., Философия права, М., 2016, с. 32.

7. Овчинников А.И., Правовое мышление теоретико-методологический анализ. Ростов н/Д, 2003, с. 82.

8. Лапаева Е.В., Различные типы правопонимания: анализ научно-практического потенциала. М., 2005, с. 34.

9. Конюхова В.А., Садовникова Г.Д., Комментарий к Конституции Российской Федерации.М., 2006, с.113

10. Туманов В.А., Буржуазная правовая идеология. К критике учений о праве. М., 1971.

11. Овчинников А.И., Правовое мышление в герменевтической парадигме. с. 90.

12. Рыбаков О.Ю., Правовая политика как юридическая категория: понятие и признаки// Журнал российского права. 2000. N3, с. 34.

13. Байниязов Р.С., Мировоззренческие основы общероссийской правовой идеологии//Журнал российского права. 2000. №11, с. 20-22.

14. Овчинников А.И., Овчиникова С.П., Евразийское правовое мышление Н.Н. Алексеева. Ростов н/Д, 2002, с. 125.

15. Василенко И.А., Современные правовые доктрины, М., 1992, Алексеев С7В., Каламанов В.А., Черненко А.Г., Идеологические ориентиры России/по ред С. В. Степашина, М., 1998, с. 32,36, Полякова Т.М., К вопросу о политико-правовой доктрине России//История государства и права. 2006, №1, с.34.

16. Тихомиров Ю.А., Право: прогнозы и риски. М., 2015, с. 12-13.

**Համբարձումյան Գ.** – ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ, էլհասցե՝ gagik.hambardzumyan1@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 14.03.2025 թ., տրվել է գրախոսության 14.03.2025 թ., երաշխավորվել է իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ. Սաֆարյանի կողմից, ընդունվել է տպագրության 10.07.2025 թ.: